ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2026 թվականի N 562 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինության, Հայաստանի Հանրապետության քաղ. Երևան, Նար-Դոսի փողոց 38 հասցեում գտնվող՝ 822.6 քառ. մ մակերեսով մարզադահլիճը (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0234-0017-004), 30.5 քառ.մ (36.6 խոր.մ) մակերեսով պարիսպը (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0234-0017-005), 6.2 քառ. մ (7.44 խոր. մ) մակերեսով պարիսպը (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0234-0017-006) (2025 թվականի մարտի 6-ի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 06032025-01-0017, այսուհետ՝ անշարժ գույք) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ. 33 հիմնական դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցման համարը՝ 278.210.03328, այսուհետ՝ կազմակերպություն):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հիմք ընդունելով N 06032025-01-0017 սեփականության իրավունքի գրանցման վկայականի տվյալները կազմակերպության հետ կնքել 2013 թվականի մայիսի 2-ին կնքված՝ անշարժ գույքի անհատույց օգտագործման թիվ 69/0013 պայմանագրում սույն որոշումից բխող փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ դրանում նախատեսելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ